

աւրինացն Աստուծոյ՝ թագաւորին եւ գաւրացն, հանդերձ ամենայն գաւառաւքն:

6 Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատեր յորդորելով. յորում եւ յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել: 7 Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչեր Ջաղայ, այր գրագետ եւ ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց եւ ի խառնադանջ¹ գաւառաց իշխանութեան իւրոյ ժողովել մանկունս եւ տալ² ի ձեռն վարդապետին: 8 Չոր առեալ՝ արկաներ ի բովս վարդապետութեանն եւ հոգեւոր սիրոյն եռանդամբ³ զաղտ եւ զժանգ⁴ շարաւահոտ դիւացն եւ զսնտիագործ պաշտամանն ի բաց քերէր⁵, այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց եւ անյիշատակ ցուցանել, մինչեւ⁶ ասել, թէ՛ Մոռացայ զժողովուրդդ իմ⁷ եւ զտուն հաւր իմի^ա:

9 Եւ արդ զնոսա, որ յայնչափ⁸ ի մասնաւոր եւ ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամաւքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք⁹ միոյ Աստուծոյ յաւրիներ: 10 Յորոց եւ գտան արժանիք՝ ելեալ¹⁰ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն¹¹, այր սուրբ եւ բարեպաշտան, եպիսկոպոս կացեալ տանն արքունականի:

11 Իսկ իբրեւ ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածպաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ դառնայր յերկիրն Յայոց եւ պատահեալ Սահակայ կաթողիկոսին¹² Յայոց, պատմեր նմա զողջութենէ եղելոցն, միանգամայն եւ¹³ փառաւոր առնելով¹⁴ զԱստուած, զմեծաւունն¹⁵ Զրիստոս:

1 *d* խառնիճադանջ

2 *c* եւ տալ / *միւսն. չիք* եւ

3 *c* եւ եռանդամբ

4 *b* ժանդ

5 *abeվ չիք* քերէր

6 *bc* մինչ

7 *e չիք* իմ

ա Յմմտ. Սաղմ. ԽԴ 11:

8 *b* այնչափ

9 *c ուղղ.* փառաբանիչս

10 եղեալ *ուղղ.* ելեալ

11 *de չիք* անուն

12 *abceվ* կաթողիկոսի

13 *abdeվ չիք* եւ

14 *c* առնելոյ

15 *b* զմեծն անուն